

համալսարանական գրադարանի հայերեն գրքերի հարուստ ժողովածուի մեջ: Դրա հետ միասին գրադարանի հայերեն գրքերի թիվը հասավ 107-ի: Պրոֆ. Մակլերը իր բերլինգրաֆիայում նկարագրել է 104 գիրք, որին պիտի ավելացնենք ևս 2 գիրք, այն է Հայաստանի պատմությունը՝ 1669 թվականից և հոգևոր երգերի երգարանը 1702 թվականից: Սրանցից առաջինը ըստ երևույթին տպագրել է ինքը Ոսկանը, մինչդեռ մյուսը հավանաբար տպագրվել է Թոմաս Վանադեցու աշխատանոցում: Իր աշխատության մեջ պրոֆ. Մակլերը հիշատակում է 53 հայերեն գրքեր, որոնք տպագրվել են Ամստերդամում: Դրանցից 13 գիրք կա նաև Ամստերդամի հավաքածուում...

1666 թ հայերեն Աստվածաշնչի երեք օրինակների մասին մենք կարող ենք մի քանի ևս ավելացնել. նրանց մեջ գտնվում են ի միջի այլոց Քրիստոֆել վան Դելկի մեծ թվով փայտափորագրումները: Նրանք նույն փայտափորագրերն են, որ միաժամանակ գործ են ածվել երիտասարդների համար կազմած փոքրիկ Աստվածաշնչի մեջ և որը ես նկարագրել եմ Յան էվոլթ-սոնի մասին իմ հոդվածում: Այս բնավ չի նշանակում, թե Ոսկանն է տպագրել այդ փոքրիկ Աստվածաշնչը (որի մի օրինակը կա իմ հավաքածուում): Հավանական է, որ Ոսկանը փայտափորագրերը ունեցել է ավելի վաղ և Ամստերդամից իր մեկնելուց հետո հանձնել է վերահիշյալ Աստվածաշնչի հրատարակիչներին: Որովհետև արդեն պատրաստել էր իր հայերեն Աստվածաշունչը, ուրեմն պետք է կատարվեր իմ ավելի վաղ հիշված Լիվորնոյի երեք հայ վաճառականների խոստումը...

Ոսկանը Ամստերդամում իր մնալու նախավերջին տարում (1668) լույս ընծայեց „Alouësaitiq“¹ (Աղվեսագիրք—գիրք խոստովանության) և նոր Կտակարանը, որն իր մեջ պարունակում է հետևյալ հաղորդումը. «...Ոսկան եպիսկոպոսի ջանքերով... իմ աշակերտ Կարապետի տպարանում... բայց մեր երկուսի տառերով և աշխատակցությամբ... իմ առաջին իղձն էր. Նոր Կտակարանը ըստ Հեթում արքայի Աստվածաշնչի»:

Այս հիշատակարանը բնորոշ է նրանով, որ շնայած Ամստերդամի տպարանը Ոսկանի անունովն էր, բայց նրա աշակերտ Կարապետը նրա իսկական տերն էր: Մենք իմացանք, որ դեռ 1664 թ. տպարանից լույս ընծայեց Կարապետի աշխատությունը: Անկասկած այդ գործում ֆինանսական կողմը մեծ դեր էր խաղում: Եվ իրոք, մի այլ տեղից մենք իմանում ենք, որ Ոսկանը անկանոն կերպով էր ֆինանսական օժանդակություն ստանում: Դրամի պակասությունը հաճախ Ոսկանին բողոքովին անկարող էր դարձնում: Հակառակ դրան Ոսկանը անխոնջ կերպով շարունակում էր աշխատանքը: Կարապետի անվան մեջերևումով մենք ծանոթացանք Ամստերդամի ևս մի այլ հայ տպագրիչի հետ:

1670-ին մենք նորից Ոսկանին գտնում ենք Լիվորնոյում: Ֆրանսիացի լեզվաբան Յ. Դ. Բորին (J. D. Bory) իր „Les origines de l'imprimerie à Marseille. Recherches historiques et bibliographiques“ (1858) գրքի մեջ նոր տեղեկություններ է տալիս մեզ Ոսկանի մասին: 1670 թ. Ոսկանը Լիվորնոյում հրատարակում է «Պարտեզ» անունը կրող աղոթագրքերը, որը ըստ բիշ քանում է տարբերվում արևելյան աղոթագրքերից: Նա հետաքրքրվում էր նաև արևմտյան եկեղեցու կատեխիզիսով: «Պարտեզ» գիրքը հետևյալ հաղորդումն ունի. «Տպված յամի տյառն 1670 Լիվորնոյում (գրքի մեջ Libourne), Ս. էջմիածնի և Սուրբ Սարգսի տպարանում: Գրքուկի մեջ տպված է նաև „in Livorno con licenza dei superiori“ (Լիվորնոյում) կառավարության թույլտվությամբ): Նույն գրքի վերջում մենք կարդում ենք՝ «Այս գրքուկը, որ հոգևոր պարտեզ անունն է կրում, ավարտվեց հայկական 1120 թվականին, երևանցի Ոսկանի թույլտվությամբ և Անդրինցի (Անդրիանոպոլիսի) Կարապետի սրբագրությամբ»: Ոսկանի կողմից հիմնված տպարանները միշտ կրում են «Սուրբ էջմիածին և սուրբ Սարգիս» անունը Ամստերդամում, Լիվորնոյում, Մարսելում, ինչպես և Կոստանդնուպոլսում (Ստամբուլ)...

Երբ վանետիկի Մխիթարյան միաբանության հիմնադիրը կամեցավ սկսել տպագրական գործը և ծանոթացավ Ոսկանի տառերին, ցանկություն հայտնեց, որ դրանք տրամադրվեն նաև իրեն: Մյուս կողմից նրան հայտնի էր, որ Ամստերդամում Ոսկանի տպագրական գույքը բռնագրավել էին նրա պարտատերերը: Դրա կապակցությամբ այնուամենայնիվ նա անհրաժեշտ քայլեր արեց իրեն ապահովելու տառամայրերով և տառերով: 1729 թ. ժամանակագրությունից պարզվեց, որ Մխիթար Աբբան խնդրել էր իր բարեկամներից մեկին՝ հայ վաճառական Հարությունին՝ Ամստերդամ կատարած իր ճանապարհորդություններից մեկի ժամանակ պարզել, թե որտեղ կարելի է գտնել Ոսկանի տառերը: Եվ իրոք հայ վաճառական Հարությունին հաջողվեց Ամստերդամում գտնել Ոսկանի մի պարտատիրոջ կամ պարտատերերին և տեղեկանալ, թե ինչ դոմպր էին պահանջում, որպեսզի հանձնեն Ոսկանի տպարանական գույքը: Բանակցությունների արդյունքի մասին նա հաղորդեց Մխիթար Աբբային, որն ընդունեց Ոսկանի պարտատերերի պայմանները: Հետո Ամստերդամից նրան ուղարկեցին Ոսկան եպիսկոպոսի տպարանի